«271500-Ճարտարապետություն և դիզայն» մասնագիտության ընդհանուր բնութագիր

Շրջանավարտի որակավորումը՝ Ճարտարապետության բակալավր՝ «Ճարտարապետություն և դիզայն» մասնագիտությամբ:

Ուսումնառության տևողությունը՝ 4 տարի, որակավորման անհրաժեշտ կրեդիտների քանակը՝ 240:

Ուսումնառության ավարտին շրջանավարտը՝

ա) կտիրապետի նախագծման տեսության և պրակտիկայի, մեթոդների ու գործառույթների, համաշխարհային և ազգային Ճարտարապետության, քաղաքաշինության ու լանդշաֆտային ճարտարապետության, հարակից արվեստների պատմության, բնության պահպանության, էկոլոգիական կայունության և շրջակա միջավայրի վրա ազդեցության, շինարարական արտադրության, կոնստրուկցիաների, շինանյութերի, շինարարության մեթոդների և կազմակերպման ոլորտների վերաբերյալ գիտելիքների,

բ) կարող է կատարել անհրաժեշտ հետազոտական աշխատանքներ օբյեկտների նախագծման համար և մշակել բնակելի, հասարակական և արտադրական նշանակության կառույցների, քաղաքաշինության, պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության ու վերականգնման, տարածքների զոտիավորման, ճարտարապետական միջավայրի դիզայնի ոլորտների նախագծեր, մշակել գործողությունների ռազմավարություն, համագործակցության և թիմային աշխատանքի ժամանակ գնահատել հարակից մասնագիտությունների դերը, տիրապետել մասնագիտական էթիկայի ու վարքագծի կանոններին: